ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Գ. Շիրակամուտ

N° Ե -03/224

«16» 10. 2018թ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ներկայացնում ենք Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 58-Ա և 59-Ա որոշումները:

Առդիր 2 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հոկտեմբերի 2018 թվականի N59 - Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածով և հիմք ընդունելով Շիրակամուտի համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի 2018թ.հոկտեմբերի 16-ի թիվ 7 արձանագրությունը, քաղ.՝ Գառնիկ Հարությունյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Շիրակամուտ համայնքի բյուջեի 4726 հոդվածից Շիրակամուտ համայնքի բնակիչ Գառնիկ Հարությունյանին հարազատի՝ Քնարիկ Մարտիրոսյանի հուղարկավորության ծախսերը հոգալու նպատակով հատկացնել դրամական օգնություն՝ 30000/երեսունհազար/ ՀՀ դրամ:
2. Համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2018 թվականի N58 - Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ և ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ և ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Լ.Նալբանդյանի լ/ա Հ.Նալբանդյանի դիմումը,ՀՀ Լոռու մարզպետի գրությունը՝ հողամասի գործառնական նշանակության փոփոխություն կատարելու համաձայնության վերաբերյալ, հաստատված հատակագիծը, ,,Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՞՞ 12.06.1992թ. թիվ 17/6/8 որոշումը,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ 16.02.2018թ. սեղանամատյան թիվ 368, ղեկավարվելով,,Տեղական ինքնակառավարման մասին՞՞ ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/06/2010թ., թիվ 186-Ն հրամանով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-ն որոշմամբ

Որոշում եմ

1.Առաջնորդվելով ՀՀ Լոռու մարզպետի գրությամբ, ՀՀ հողային օրենսգրքի դրույթներով, Շիրակամուտ համայնքում 06-087-0066-0007 ծածկագրի տակ գտնվող և համաձայն հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 12.06.1992թ. թիվ 17/6/8 որոշման , Արգինով Նալբանդյանին հատկացված 0,11933հա հողամասը ,քանի որ կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառվել է որպես բնակավայրերի նշանակության համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված այլ հողամաս, ըստ որի քարտեզում կատարել է սխալ ,ուստի կատարել համապատասխան սխալի ուղղում և հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել այլ նշանակությունից որպես քաղաքացուն սեփականաշնորհված բնակավայրերի նպատակային նշանակության գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողամասի:

2. 10-օրյա ժամկետում տեղեկացնել անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմնին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճեն:

3.Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

4. Օրենքի ուժով 06-087-0066-0007 ծածկագրի տակ գտնվող 0,11933հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Լեոնիկ Արզինովի Նալբանդյանի /ծնված 1952թ./ սեփականության իրավունքը:

5 .Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ:

6. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել ,իսկ հատկացվածից ավել զբաղեցրած հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Լեոնիկ Արզինովի Նալբանդյանի /ծնված 1952թ./ սեփականության իրավունքը:

7.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

8.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ գ.Շիրակամուտ ,Վանաձորյան խճուղի, թիվ 11/1 հողամաս:

9.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 06801665